<<ԻՆՏԵՐԱԿՏԻՎ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ>>
ՀԻՄՆԱԴՐԱՄ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ 2023

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

- **Թեմա՝** Համընդհանուր ներառական կրթության առավելություններն ու բացթողումները
- **Առարկա՝** ֆրանսերեն
- **Հեղինակ՝** Մամաջանյան Նունե Արամի
- **Մարզ՝** Արագածոտն
- **Ուսումնական հաստատություն՝** Արագածի թիվ 2 մ/դ ՊՈԱԿ

Ապարան 2023

Բովանդակություն

- Ներածություն----------3
- 1-ին գլուխ. Ներառական կրթությունը ՀՀ-ում, ինչ է ներառական կրթությունը----------6
- 2-րդ գլուխ. Ներառական կրթության առավելություններն ու բացթողումները----------9
- Եզրակացություն---------- ----------15
- Գրականության ցանկ----------18

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Չափավորությունը հանդուրժողականությունն

ու արդարությունը ղեկավարում են

սիրտը, զինաթափում դժգոհությունը։

Ֆրանցիսկո դե Պաուլա Սանտանդեր

Մարդկության զարգացման ընթացքում տարբեր ֆիզիկական և մտավոր առանձնահատկություն ունեցող անձանց իրավունքների ձևավորումն ու սահմանումն անցել են բազում փուլեր խղճահարությունից մինչև սոցիալական բազմաթիվ ծառայությունների մատուցում։ Աշխարհը վաղուց արդեն ընդունում է հաշմանդամություն ունեցող անձանց լիարժեքության գաղափարը՝ հիմնվելով համընդհանուր ներառման արդյունավետության վրա։ Աշխարհում մոտ 240 միլիոն հաշմանդամ երեխա կա, նրանք միացիալ բոլոր երեխաների հետ միասին ունեն երազանքներ և նպատակներ ապագայի հանդեպ։ Կրթության և հասարակական ողջ ոլորտը պետք է ստեղծեն պայմաններ և նախադրյալներ, որպեսզի խնդրով երեխաները կարողանան զարգացնել իրենց հմտությունները և իրենց ողջ ներուժը սպառել՝ դառնալով հասարակության լիիրավ ներկայացուցիչ, զգալով իրեն օգտակար։ Սակայն ողջունելով համընդհանուր ներառական կրթության անցնելու բարձրարժեք այս որոշումը, ընդունելով բոլոր դրական կողմերը ցավով պետք է նշել, որ դեռ որոշ օղակներում մեխված գաղափարները անտեսում են մնան երեխաների խնդիրները՝ քաղաքականություն մշակելիս, սահմանափակվում է նրանց կրթության հասանելիությունը, սոցիալական, տնտեսական և քաղաքական կյանքին մասնակցելու կարողությունը։ Լինում են դեպքեր երբ նրանք կարող են անգամ դուրս մնալ ընդհանուր կրթության ցանցից։

Սակայն չի կարելի չշեշտադրել, որ վերջին տարիներին համընդհանուր ներառական կրթությունը իր բարի պտուղներն է քաղում թե՛ սոցիալական թե՛ կրթական դաշտում: Ներառական կրթությունը, ինտեգրումը, ներառումը, համախմբումը, հանդուրժողականությունը, ինտեգրվող հասարակությունը, հավասարությունը, կրթության կամ հատուկ խնամքի կարիք ունեցող երեխաների բարձր գաղափարները դարձել են մեր կրթական բառաֆոնդի անքակտելի և կարևորագույն մասը: Այս սկզբունքով կրթությունը այլևս իրականություն է մեր կյանքում: Ներառական կրթությունը բացառում է ցանկացած խտրականության դրսևորում՝ ապահովելով հավասար վերաբերմունք: Հարկ է նշել որ կրթության մասին օրենքը բացարձակ նույնն է բոլորի համար:

Ներառական կրթությունը մի ծրագիր է, որը հանձն է առնում ստեղծել ուրույն և նպաստավոր պայմաններ կրթական բոլոր համակարգերում կրթության հատուկ կարիք ունեցող երեխաների համար: Ի լրացում ասեմ, որ ներառական կրթությունն ուղղված է հոգալու և նպաստավոր պայմաններ ստեղծելու ոչ միայն հաշմանդամություն ունեցող երեխաների կրթական կարիքները, այլ նաև որոշակի սոցիալական խավի, ազգային փոքրամասնության և այլ անհատական առանձնահատկություններ ունեցող երեխաների:

Թեմայի արդիականությունը կայանում է նրանում, որ այսօր ներառական կրթության հարցերով զբաղվող, արդյունավետ իրականացնող և բոլոր մարտահրավերներին դիմակայող ցանկացած կառույց գտնվում է ուշադրության կիզակետում: Այստեղ կարևորվում են բոլոր խնդիրների վերհանում, դրանց արդարացի քննարկումն ու լուծումների օպտիմալացումը: Սրանք արդի խնդիրներն են, որի հետ բախվում ենք բոլորս: Համընդհանուր ներառական կրթությունը պետք է համեմատվի միջազգային իրավական նորմերին և չափորոշիչերին: Թեման արդիական է քանի որ, խնդիրներն ավելի են բարդանում, երբ խոսքը վերաբերում է ԲՈՒՀ ընդունվելու փաստին, չէ որ ներառական կրթության չափանիշները դեռ այնքան բարձր ու կատարյալ չեն:

Հետազոտական աշխատանքի նպատակն է՝ գտնել և հետազոտել օրենսդրությունը՝ ներառականության կարիք ունեցող երեխաների ներգրավման մասին:

Հետազոտությունների շնորհիվ առաջ են քաշվում տեսական, գործնական և օրենսդրական հիմքեր՝ կատարելագործելու այս ողջ համակարգը իր բոլոր մարտահրավերներով, առավելություններով և խոչընդոտներով:

ՀՀ-ում ներառական կրթության իրականացման ներկայիս տիրող իրավիճակը պետք է ռեալ գնահատել՝ վերհանելով բոլոր, նույնիսկ նվազագույն խնդիրները և ձեռքբերումները, անլուծելի թվացող խոչընդոտները՝ գտնելով դրանց լուծումները տանող ուղիները՝ պետական, քաղաքական, ֆինանսական, սոցիալ-հոգեբանական և ի վերջո կրթական:

Նպատակառուղվածությունը որպես հետևյալ խնդրի լուծում.

1. ՈՒսումնասիրել ներառական կրթության կարիք ունեցող իրավունքների ողջ համակարգը, գործնական և տեսական ողջ արդարացված դրույթները, իրավափիլիսոփայական հիմքերը՝ համակարգելով ժամանակակից եզրույթները, ցույց տալ սեփական, սյուբեկտիվ դիրքորոշումը և դրանց ամբողջական ողջ պաշարը թիրախավորել ավարտական աշխատանքի մեջ ուսումնասիրվող խնդիրների և առաջարկվող լուծումների հիմքում:

2.Քննարկել և վեր հանել ներառական կրթության առավելությունները, հաջողությունները, հասարակական, կրթական բնագավառներում:

3. Առաջ քաշել բոլոր օբյեկտիվ և սյուբեկտիվ խնդիրներն ու խոչընդոտները ներառական կրթության զարգացման սկզբնաղբյուրից մինչև մեր օրերը իրավական, սոցիալական, հասարակական պայմաններից բխող գտնել դրանց լուծման ճանապարհները:

4. Վերլուծել և համեմատել ՀՀ- ում ներառական կարիք ունեցող անձանց իրավունքների իրականացման օրենսդրությունը, համեմատել իրականացման օրենսդրությանը, համեմատել միջազգային, ինչու չէ նաև համաշխարհային իրավունքի նորմերի հետ:

Հետազոտական աշխատանքը բաղկացած է

- Բովանդակություն
- Ներածություն
- 1-ին գլուխ. Ներառական կրթությունը ՀՀ-ում, ինչ է ներառական կրթությունը
- 2-րդ գլուխ. Ներառական կրթության առավելություններն ու խոչընդոտները, բացթողումները:
- Եզրակացություն
- Գրականության ցանկ

ԳԼՈՒԽ 1. Ներառական կրթության օրենսդրական հիմքերը

1.1 Ներառական կրթության համակարգը ՀՀ-ում

Դեռևս 1990-ականներից կրթության հասանելիության խնդիրը համարվում է աշխարհում ողջ քաղաքակիրթ հանրության քննարկումների թիրախ։ Շեշտը դրվեց ավելի շատ այն բանից հետո, երբ ընդունվեցին երեխաների իրավունքների 20 պաշտպանության ոլորտներում 2 կարևորագույն փաստաթղթեր՝

- <<Երեխաների իրավունքների կոնվեկցիա>>
- <<Կրթություն բոլորի համար>>

Սրանից 4 տարի անց՝ 1994թ-ին տեղի ունեցավ ներառական կրթության հիմնական սկզբունքների և դրույթների, գաղափարական սկզբունքների մշակումը։ Հռչակագիրը 1-ին անգամ ստորագրվեց Սալամանկայում և 2000թ-ին վերահաստատվեց Սենեգալում կրթության համաշխարհային ֆորումի ընթացքում։ Հռչակագրի համաձայն յուրաքանչյուր երեխա ունի կրթական առանձնահատկություններ և կրթվելու հիմնարար իրավունք։ Ըստ այդ հռչակագրիբոլոր կրթական համակարգերը պետք է ստեղծվեն և մշակվեն, իրականացվեն բացառապես այդ առանձնահատկությունների լայն բազմազանությունը հաշվի առնելով։ Հանրակրթական դպրոցները պետք է հարմարեցվեյին կրթության հատուկ պայմանների կարիք ունեցող անձանց պահանջների՝ թե՛ ողջ մասնագիտական անձնակազմ,, թե՛ կահավորման և տեխնիկական առումով։ Այս տեսակ կրթության զարգացման մեջ մեծագույն ներդրում ունեցավ ՅՈՒՆԵՍԿՕ-ի կողմից 1996թ-ին ընդունված՝ <<Կրթության ոլորտում խտրականության դեմ կոնվեկցիա>>; 2005թ-ին արդեն ՅՈՒՆԵՍԿՕ-ն գործածության մեջ դրեց կարևորագույն և արմատական փոփոխություն մցնող երկու հասկացությունների սահմանումներ

- <<Ներառում>>
- <<Ներառական կրթություն>>

Սա մի միջոց է նվազեցնելումշակույթի, ուսման, համայնքներում գործունեության, կրթությունից խուսափելու փաստերը և նման անձանց դերի բարձրացումը խթան է հասարակության մեջ։

Ներառական կրթության 6 առանձնահատկություններն են

- Կրթական բազմազանություն:
- Կրթության առանձնահատկությունից բխող կարիքի լիարժեք բավարարում:
- Միասնականությունը և յուրահատկությունը բացահայտող դպրոցական պլաններ:
- Բոլոր խոչընդոտող գործոնների լիարժեք և արդար բացահայտում և կատարյալ չեզոքացում:
- Ներառական կրթությունը ենթադրում է խորքային և երկարաժամկետ փոփոխություններ:
- Ներառական կրթությունը ենթադրում է օգնող կառույցների և պաշարների ստեղծում՝ ուսուցչական, ադմինիստրատիվ անձնակազմի, ծնողների և աշակերտների, ներառական կրթության համակրգի այլ շահառուների համար:

Ինչ է ներառական կրթությունը

Համընդհանուր ներառում

Ներառական կրթությունն կրթական համակրգում առանձին տեսակ չէ, այլ կրթության հատկանիշ, որը ենթադրում է յուրաքաքնչյուր երեխայի կարիքին համապատասխան կրթության իրականացում: Սա կրթական գործընթաց է, որը ուղղված է բոլոր սովորողների կարիքներին ընդգրկելով նաև հաշմանդամություն, մտավոր և ֆիզիկական այլ առանձնահատկություններ ունեցող երեխաներին, բռնության ենթարկվող երեխաներ, աշխատող երեխաներ, միգրանտներ, աղքատ և չքավոր երեխաներ, լեզվական խոքրամասնություններ, հակամարտությունների պատճառով ողբացած երեխաներ և այլն: Այստեղ պահանջվում է բացառապես համակարգի հարմարեցում, այլ ոչ երբեք երեխայի: Ներառական կրթությունը հաշմանդամության սոցիալական մոդելի յուրօրինակ ածանցյալ է: Այն հաստատում է որ բոլոր երեխաները տարբեր են, իսկ հանրակրթական համակարգը պետք է հարմարվի բոլոր բոլոր սովորողների հոգեկան, մտավոր և ֆիզիկական զարգացման կարիքներինև պահանջմունքներին: Ներառական կրթությունը բացառում է խտրականությունը: Ներառական կրթության բարձր որակը ապահովող երեք երաշխիքներ կան

- Մասնակցություն
- Համագործակցություն
- Հավասարություն

Դպրոցների ճկուն ուսումնական ծրագրերի զարգացման գլխավոր կետերից են։ Այս ծրագրերի իրականացման շնորհիվ յուրաքանչյուր երեխա ստանում է իր կարիքների և կարողություններին համապատասխան կրթություն։ ՈՒսուցումը պետք է խթանի, այլ ոչ թե խոչընդոտի երեխայի զարգացումը։

Մարդկային քաղաքակրթությունը բավականին հակասական ճանապարհ է անցել կապված հաշմանդամության հետ։ Սա սոցումի հոգեկան բարոյահոգեբանական էվոլյուցիայի ուղի է, որը մինչև հիմա դեռ հարթվում է։ Այստեղ կա և՛ արհամարհանքի, և՛ ատելության, բռնության ինչպես նաև հոգատարության, բարեսրտության, աջակցության օրինակներ։ Միայն մի բան էր նախկինում հարաբերություններում պակասում՝ ***համագործակցություն հավասար պայմաններում։*** Հենց այսպիսի մոդելի կատարելագործմանն ու զարգացմանն է ուղղված ներառական կրթության կողմնակիցների ջանքերը։ Համընդհանուր ներառականի գործընթացը ներդաշնակ պետք է լինի փիլիսոփայության գաղափարին։

Ակնհայտ է, որ միջդիսցիպլինան կոտրում է բոլոր սահմաններն ու կարծրատիպերը վախեցնում է ոչ միայն պաշտոնյաներին։ Երբ համընդհանուր ներառական կրթությունը անխուսափելիորեն թակեց բոլոր կրթօջախների դռները շատ մասնագետներ ձգտում էին անջատել իրենց՝ <<օտար>> ոլորտի մասնագետներից, փորձեցին ատեղծել այսպես կոչված <<մաքուր>> գիտություն, մոռանալով ում համար են նրանք դա անում։ Սակայն հասարակության մեջ միշտ էլ առաջադիմականներ կան։ Մենք նրանց երախտապարտ ենք առաջընթացի համար, նրանք կոտրում են քարացած տեսակետներ, փոխում լճացած մեթոդների հունը, և ճանապարհ հարթում դեպի գիիտելիքների և կարողությունների օվկիանոս։

ԳԼՈՒԽ 2. Ներառական կրթության առավելություններն ու բացթողումները, խոչընդոտները

Ներառական կրթության առավելությունները

- Հասակակիցների հետ փոխհարաբերություններ:
- Սոցիալականացում:
- Հավասար իրավունքներից օգտվոլու հնարավորություն:
- Ներառական մեթոդաբանությունը դյուրին է դարձնում հասարակական շփումը ցանկացած տեսակի անհատի հետ, կոտրվում են կարծրատիպեր:
- Անձի ինքնագնահատականի բարձրացում:
- Կարևոր և օգտակար լինելու զգացում:
- Միայն ներառական կրթությունը կարող է նվազեցնել վախը և ստեղծել ամուր բարեկամություն, նպաստել հարգանքի և փոխըմբռմնան հիմնմանը:
- Նախապատրաստումսոցիումում հաստատվելու և ինքնարիալիզացման, կայացման:
- Բազմաթիվ լճացած քարացած հասարակական կարծիքների վերացում:

Իսկական ազնիվ բարեկամությունը փոխադարձ աջակցության մեջ է...

Վոլֆգանգ Գյոթե

Ներառական կրթությունը նաև մեծ առավելություն ունի ուսուցիչների, դպրոցների, ընտանիքների և համայնքի համար, քանի որ նմանատիպ ուսուցումը հասարակության բոլոր շերտերի համար ստեղծում հավասար և արդար պայմաններ: Ներառական կրթությունը հնարավորություն է ընձեռնում երեխային մնալ իր ընտանիքի հետ, հաճախել իր համայնքի դպրոցը, իր ասակակից ընկերներից չտարբերվելով և չմեկուսանալով, ինչը կենսական նշանակություն ունի ցանկացած երեխայի համար, նրա զարգացման բոլոր փուլերի համար:

Կրթության տեսանկյունից - Ներառական դպրոցին ուղղված բոլոր երեխաների համատեղուսուցման պահանջը խթանում է նորանոր ուղիներ, արդյունավետ մեթոդների և նպատակաուղղված աշխատանքների որոնումը, որոնք կհամապատասխանեներեխաների պահանջներին, անկախ նրանց առանձնահատկություններից և դրանցով պայմանավորված հիմնախնդիրներից: Ի վերջո ներառական կրթությունը այլևս մարդու իրավունք է, այն կարող է ապահովել բարձրորակ կրթություն և հիմնավորված է պետական և սոցիալական առումով:

Սոցիալական առումով - Փոխվում է հասարակության վերաբերմունքը սոցիալական անհավասարության և խտրականության հանդեպ:

Տնտեսական տեսանկյունից - Պետության համար անհամեմատ մատչելի է ստեղծել և պահպանել ներառական ուսմամբ դպրոցներ:

Իրավունքի տեսանկյունից

- Միասին սովորելու բացարձակ իրավունք:
- Թերարժևորման բացառում, ոչ խտրականությանը:
- Խնդրով մեծահասակների պահանջը ներկա սենդի ավելի լավ պայմաններ ստեղծելու:
- Ապացուցված է թե ակադեմիական, թե սոցիալական առումով ուսումնառության ավելի բարձր որակ է ապահովվում:
- Հատուկ դպրոցներում չկա այնպիսի գործընթաց, որը չի կատարվում հանրակրթական դպրոցում:
- Արդիունաբերության ռեսուրսը ուղիղ համեմատական է նվիրվածության և աջկցության որակի հետ:

Ներառական կրթության բացթողումները և խոչընդոտները

Արդեն նյութում բազմիցս նշվեց, որ ներառական կրթությունը հնարավորություն է տալիս բոլոր երեխաներին միմիանց հետ զարգացնել բարեկամական ջերմ և աջակցող հարաբերություններ: Նման ընկերությունն էլ զարգացնում է դերի կարևորության մոդելը: Այնուամենայնիվ որքան էլ ոլորտը ուսումնասիրված լինի, որքան էլ ջանքեր թափված լինեն, որքան էլ տեղեկացված լինենք միևնույն է ցանկացած նորարարությունիր նախնական փուլից, զարգացման ընթացքից մինչև կայացման կուլմինացիա հանդիպում է բազում խոչընդոտների և խնդիրների, որոնք կամ դժվարացնում են գործընթացները կամ երբեմն նաև դարձնում անհնար: Կամաձայն << Կրթության մասին>> ՀՀ օրենքի մինչև 2025 թ նախատեսվում է, որ Հայաստանը կընդունիամբողջական համընդհանուր ներառական կրթության համակարգի: Պետք է իրատես լինել և խոստովանել Հայաստանում ներառական կրթության հետ կապված խնդիրներն ու խորընդոտները բազմազան են և տարբեր ոլորների հետ կապված՝ շենքային, սոցիալ-տնտեսական, առողջապահական, ֆինանսական, քաղաքական, հասարակական, բարոյահոգեբանական, ազգային մտածելակերպի քարացած ու չարթարացված տեսակետների: Քաղաքակրթության հետ համաժամանակյա քայլեր անելու նպատակով պարզապես անհրաժեշտ է չեզոքացնել այս խոչընդոտները, լուծել անլուծելի թվացող խնդիրները և քայլ առ քայլ հասնելայն երկրների ցակին, որոնք բազմաթիվ փայլուն օրինակներ են կերտել, հասել մեծ հաջողությունների:

Անելիքները դեռ շատ են և ահա այն խնդիրների ցանկը, որոնց բախվում ենք՝

1. Ներառական դպրոցներըչունեն ներքինհարմարեցվածություն, թեքահարթակներ և՛ ներսում, և՛ դրսում, թեքահարթակ կարելի է տեսնել միայն 1-ին հարկում: Գրեթե ոչինչ

նախատեսված չէ այն երեխաների համար, որոնք ունեն հենաշարժողական խնդիրներ, նրա դասասենյակը կարող է գտնվել վերջին հարկում: Նման խնդիրները բավական են, որ երեխան հրաժարվի դպրոց հաճախել: Հնարավոր է լինում միայն նրանց համար, ում խնդիրները ավելի քիչ են:

2. Ներառական դպրոցներում սանհանգույցները հարմարեցված չեն: Հիմնականում տիպային են, որոշ դեպքերում նույնիսկ անմխիթար:

3. Դասասենյակները հարմարեցված չեն անհրաժեշտ գույքով, այն ինչ դրանք համարվում են առանձնահատուկ դասասենյակներ:

4.Մարզադահլիճները հարմարեցված չեն, չկան մասնագետ-ուսուցիչներ, ովքեր կաշխատեն ֆիզիկական խնդիրներ ունեցող երեխաների հետ:

5. Մասնագիտական ռեսուրսների պակաս, որն ունի իր սուբյեկտիվ և օբյեկտիվ պատճառները:

6. Առարկայական ուսումնական պլանի մշակում: Այս պլանը յուրաքանչյուր խնդրով երեխայի երեխայի համար կազմվում է անհատապես ուսուցչի և ծնողների անմիջականմասնակցությամբ, սակայն արդյոք բոլոր ծնողներն են տեղյակ և ի վիճակի մասնակցել պլանի կազմանը: Որոշ առարկայական ուսուցիչներ շատ մեծ ուշադրություն չեն դարձնում անհատական պլանին:

7. Ուսուցիչների դասընթացների և վերապատրաստման կազմակերպման պակաս ուսուցիչներին նրառական կրթության մասին ընդհանուր գիտելիքներ տալուց զուտ կարևոր է նաև մասնագիտականհմտությունների և գիտելիքների զարգացումը շատ հաճախ նրանք բախվում են այնպիսիխնդիրների, որոնց պատասխանը չունեն: ՈՒսուցիչների մեծամասնությունը չի տիրապետում ԿԱՊԿՈՒ- ի առանձնահատուկ մեթոդների: Սա հանգեցնում է ցածրորակ ներառման կամ նույնիսկ կրթական գործընթացի բացառման՝ երեխան դուրս է մնում ծրագրից:

8. Ներառական կրթությունը պետք է սկսվի նախադպրոցական տարիքից :

9. Խտրական և վերապահումներով մոտեցում առանձնահատուկ կարողությունների տեր երեխաներ նկատմամբ: Սա կապված է մեր հասարակության ընդհանուր կրթական զարգացվածության, աշխարհայացքի հետ:

10. Ներառական դպրոցներն ավարտելուց հետո ԲՈՒՀ - ընդունվելը ևս բազմաթիվ խնդիրներ է առաջացնում:

11. Հասարակության տարբեր շերտերում և գործնական տարբեր ոլորտներում ԿԱՊԿՈՒ- ով երեխաների գիտելիքների և կարողությունների իրացման բարդությունը:

Այս բոլոր կետերը երաշխիք են անձի զարգացման միջոց հանդիսացող

կրթադաստիրակչական միջավայրի առողջ ստեղծմանը։ Ներառական կրթական տեխնոլոգիաների առանձնահատկությունն է լինել կրթական կրթական ընդունված համակարգերի և արտաին միջավայրի հետ մշտական համագործակցության մեջ։ Սա մի յուրահատուկ րդարացի մոտեցում է բազմակողմանիորեն արժևորել ցանկացած իրողություն և երևույթ, ընդունել այլոց ներաշխարհն ու հայացքները։ Դեռևս 2000թ-ից ներառական կրթությունը ՀՀ կրթական բարեփոխումներին առնչվող առաջնահերթ խնդիրներից մեկն է եղել։ ԿԱՊԿՈՒ անձանց կրթության մասին օրենքը հաստատվել է 2005թ-ին որից հետո ներառական կրթությունը ընդգրկվել է կրթության զարգացման պետական ծրագրերի մեջ։

Հաշմանդամութուն ունեցողներին ծաղրանքով, քամահրանքով և խտրականությամբ վերաբերվելը, մերժելը դաստիրակության հետ կապված խնդիր է, սա մի ցածրորակ մտածելակերպ է, որը պետք է արմատախիլ անել հասարակության շերտերից։ Ընտանիքներում պետք է մեծ աշխատանք տանել, այնուհետև դպրոցում։

Հարկ է նշել Դանիայի, Շվեդիայի, Կանադայի ներառական կրթության օրինակները։

Շվեդիայի փորձը բավանին հետաքրքիրէ և հաջողված։ Այստեղ համատեղ զարգացրեցինմանկավարժական և հոգեբանական փորձարարական ավանդույթները, ինչն էլ հիմա հանդիսացավ ինտեգրման մանկավարժությանը։ ԳԳործի դրվեց ականավոր գիտնական, բժիշկ և մանկավարժ Հ. Հանզելմանի բուժական մանկավարժության հարուստ ավանդոիյթները։ Կրթությա և դստիրակության ինտեգրման մոտեցման պատմության լույսի ներքո հետաքրքիր է Հանզելմանի առաջարկած սահմանումը <<Բուժականմանկավարժության մասին>>։ Սա ուսմունքայնպիսի երեխաների կրթության,, դաստիրակության և խնամքի մասին, որոնց հոգեբանա-ֆիզիկական զարգացումը հետ է մնացել անհատական և սոցիալական գործոնների հետևանքով։

Սոցիալականի հետ նա կապում էր միջավայրում առաջացած շեղումները, սա հարում էր Տրոշինի, Վիգոտսկու գաղափարներին՝ արատի սոցիալականով պայմանավորվածության մասինն հետևությունը՝ երեխաներին մանկական ընկերակցություններում ինտեգրումը։

XX դարի սկզբին այս թեմային առնչվեց նաև Մոնտեսորիի գործունեությունը։ Չնայած Իտալիայումհաստատված ֆաշիստական ռեժիմին, Մոնտեսորիին հաջողվեց հենց հիմքում ստեղծել ինտեգրված ուսուցում, կրթության և դաստիրակության, մարդասիրական համակարգ։ <<Զատումը արմատական սխալ է, որը ծնում է այս սխալների շղթա, արհեստական մեկուսացումը խոչընդոտում է սոցիալական զգացմունքների զարգացմանը>> Սա գրել է Մոնտեսորին իր << Երեխայի բանականությունը>> գրքում։

Մոնտեսորիի դերը ներառական կրթության համակարգում

Մոնտեսորիի դրույթներով ինտեգրացիոն կրթական համակարգը նշանակալի ազդեցություն է ունեցել ամբողջական Իտալիայի և մյուս Եվրոպական երկրների կրթական համակարգի զարգացման վրա, այդ թվում նաև Ֆրանսիայում և Շվեյցարիայում, ինչն էլ հետաքրքրել է հետազոտողներին:

Դանիայի փորձը. Ներառական կրթության ջատագովներից մեկը Դանիան է: Այստեղ 70-ականներից պետության և հասարակական կազմակերպությունների ջանքերը ամբողջությամբ ուղղված էին զարգացման խախտումներով երեխաների և առողջ երեխաների ինտեգրմանը: Առանձնահատկություններ ունեցող երեխաների կրթությունը սկսվեց իրականացվել, տարրական, հասարակական դպրոցներում, որտեղ այդ երեխաները կարող էին կրթություն ստանալ հատուկ և ընդհանուր դասարաններում, հատուկ ուսումնական ձեռնարկներ օգտագործելով: Շատ ավելի մեծ ուշադրություն էին դարձնում խնդրով երեխաների հարմարվողականությանը: Առաջին հերթին հնարավորություն պետք է տալ այդպիսի երեխաներին զգալու, որ իրենքբոլորից մեկն են, այնպիսին են ինչպես մնացած բոլորը: Ինչ վերաբերվում է խնդիրներ չունեցող երեխաներին, ապանրանց իրավունքները ինտեգրման սկզբնական փուլումներկայացված էր միայն << Մի վնասիր>> սկզբունքով: Միայն առանձին փաստերը կարող են վկայել այն մասին, որ իրականացվող ինտեգրման ծրագիրը հավասարապես առաջ էին քաշում բոլոր երեխաների շահերը, հոգում էին ոչ միայն սահմանափակ հնարավորություններով երեխաների, այլ նաև առողջ երեխաների մասին: Այսպիսով 1975թ ԿԱՊԿ- ով երեխաների ինտեգրման խնդիրը մտցվեց համազգային խնդիրների շարք: Օրենքը թույլ տվեց որ սահմանափակ հնարավորություններով յուրաքանչյուր երեխա 3-ից մինչև 21 տարեկան իրավունք ունի ընտրելու անվճար կրթության իրեն հարմար օպտիմալ ձևը:

Կանադայի փորձը. Դեռևս 80-ական թվականներից ներառական կրթության գործընթացները ավելի ու ավելի մեծ դեր են խաղում բազում պետությունների կրթական քաղաքականությունում: Ինտեգրված, համընդհանուր ուսուցման և կրթության կողմնորոշումը հատուկ ուսումնասիրվում է, զննվում Կանադայի կրթական համակարգում: 80-ականներից տարբեր կրթական մոդելների, ծրագրերի նախապատրաստման ժամանակն էր, այս ամբողջ փաթեթը ուղղված էր խթանելու և կատարելապես արդյունավետ դարձնելու ներառական ուսուցման և կրթության մոտեցումները: Մասնագետները առաջնահերթ նշում էին ծնողների լայնածավալ ներգրավումը կրթական գործընթացներում և փորձագետների սերտ համագործակցությունը: Ինտեգրացիոն գործընթացները այնպիսի ծավալով և արդյունավետությամբ էին ընթանում, որ ի վերջո հանգեցրեցին արմատական և կառուցվածքային փոփոխությունների: Այս օրինակինհետևեցին Շվեդիան, Դանիան. Իտալիան:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Կրթության ամենամեծ արդյունքը հանդուրժողականությունն է…

Հելեն Քելլեր

Ի վերջո երկար ուսումնասիրելով, կարդալով և հետազոտելով ներառական կրթության մասինբոլոր եզրույթները, օրենքները, մեթոդները, կարևորություններն ու առաջարկներրայն խթանելու և մեծ արդյունքների հասնելու, վերլուծելով առկա բոլոր խնդիրներն ու խոչընդոտները հանգում ենք մի եզրակացության, որ գլխավոր սյուները ահս կառույցը ամուր պահելու համար սերն է ու հանդուրժողականությունը: Կյանքի գլխավոր օրենքըցանկացած իրավիճակում մարդ մնալն է, որը պետք է սերմանելսերունդներին թե՛ ընտանիքում, թե՛ կրթական օջախներում և թե՛ սոցիալական ցանկացած դաշտում: Կարճ և համառոտ եզրակացություն գրելը նման նուրբ և կարևորագույն թեմայի շուրջ բարդ է, որքան էլ մենք ջանանք համընդհանուր ներառական կրթության և դրա զարգացման ոլորտում շատ են, կապված են բազմաթիվ արմատական փոփոխությունների հետ և մեկ կամ երկու տարվա իրականացվելիք աշխատանքներ չեն: Համընդհանուր ներառական կրթությունը լինելով այլևս մեր իրականության անբաժան ծրագիր ապահովում է հավասար վերաբերմունք, անխտրական և անկանխակալ վերաբերմունք մարդկանց նկատմամբ՝ անկախ այն բանից, թե ինչ ֆիզիկական, մտավոր և սոցիալակն խնդիրներ նրանք կունենան, կամ ինչպիսի առանձնահատկություններ: Սրանից հետևություն, որ պետությունն այն կարևորագույն լծակն է որը պետք է ապահովի ամիրաժեշտ նպաստավոր պահմաններ արդյունավետ ներառական կրթություն ապահովելու համար: Ներառական կրթության զարգացումն ու բարձր որակը անշուշտ կապված չեն միայն կրթական օղակների և կրթական ոլորտի հետ կապված հաստատությունների հետ: Սա պետական, քաղաքական, առողջապահական, հասարակական, սոցիալ-տնտեսական, կրթական, ազգային, բարոյահոգեբանական, արժեքների մի ողջ շղթայական համակարգ է, բավական է մեկ շղթա թերի լինիև մնացածները կպոկվեն միմյանցից: Ամփոփելով համընդհանուր ներառական կրթության առավելություններն ու խոչընդոտները թեման, ուսումնասիրելով հետազոտության արժեքները, լայն բացված աչքերով նայելով այս խնդիրներին, որ ունենք, պետք է շեշտել, որ մեր երկրում ներառական կրթությունը սաղմնային փուլից դեռ նոր է անցել զարգացման իր փուլերին՝ առավել ևս շրջաններում, որտեղ համապատասխան շենքային հարմարվածությունը մեղմ ասած թերի է : Ուսումնասիրելու և հետազոտելու թեմա ընտրելով ներառական կրթության ոլորտը ես հարկ եմ համարում նշել. որ շատ խորքային աշխաատանքներ ու ջանքեր պետք է կատարվեն հետևյալ ոլորտներում:

Սոցիալական Նախ պետք է հասարակության գիտակցական մակարդակը բարձրացնել՝ հասկանալու և ըմբռնելուհանդուրժողական լինելու իրենց ինչ որ կերպ տարբերվողի հանդեպ ընդունելով, որ օրենքը բոլորի համար նույնն է և մենք հավասար ենք, առավել ևս գալ այն գիտակցության որ ոչ ոք ապահովագրված չէ այս կյանքում և կարող է հայտնվել առանձնահատուկ կարիքներ ունեցողների շարքում: Սոցիալական գովազդները, ֆիլմերը, մուլտֆիլմերը, հատուկ գրականությունն ու ուղղորդված տեսահոլովակները պետք է դառնան մեր ամենօրյա ուղեկիցները, որ մանկահասակ երեխաներից մինչև մեծ հասակի անձը գիտակցեն, թե որքան կարևոր կառուցողական և ի հեճուկս՝ փլուզող և նվաստացնող դեր կարող են ունենալ մեկ այլ անձի կյանքում, բոլորին պետք է կրթել այս առումով: Բարոյահոգեբանական գիտակցական մակարդակը պետք է դուրս գա կարծրացած կաղապարներից: Ի վերջո ներառումը, ինտեգրումը սկսվում է ընտանիքում, շարունակվում է դպրոցում և իրագործվում է հասարակության մեջ:

Առողջապահական տեսանկյունից. Ինչու են շատացել խնդրով երեխաների ծնունդները: Առողջապահական ոլորտըմեծ աշխատանք ունի տանելու բացատրելու և կանխարգելող միջոցներ ձեռնարկելու առողջ ապրելակերպի վեաբերյալ:

- Վաղ սեռական հարաբերությունները
- Թմրանյութեր
- Ալկոհոլ
- Ամենուրեք վաճառվող հոգեմեդ և վնասակար հաբեր, խմիչքներ և կոնֆետներ, որոնք մեծագույն վնաս են երիտասարդների վաղվա օրվան:

Գերհոգատար և հետևողական լինելով կարող ենք իջեցնել այն սարսափելի թվերի ցուցանիշը, որ կա այսօր: Վատ, աղքատ, ընչազուրկ ընտանիքներըհենց առաջինն են թիրախում, որ վաղը կարող են ունենալ երեխաներ թերզարգացած, մտավոր սահմանափակ կարողություններով, ֆիզիկական ծանր խնդիրներով: Հետևաբարպետությունը պետք է ապահովիբարենպաստ պայմաններ կանխարգելելու գետագա սոցիալական խնդիրները:

Հասարակական. Բոլոր աշխատավայրերը գործատուներըև աշխատողները պետք է գիտակցելով պատրաստ լինեն համագործակցել առանձնահատուկ խնդիրներ և կարողություններ ունեցող անձանց հետ, նպաստել խնդրով անձանց լիարժեք ինտեգրմանը հասարակության մեջ, ստեղծել թե՛հոգեբանական, թե՛ տեխնիկական լիարժեք պայմաններ նրանց դերը կարևորելու, խտրականություններ չդնելու և նման անձանց ինքնարեալիզացմանը նպաստելու համար: Մեկ բառով անմնացորդ սեր և հարգանք քեզ նմանի հանդեպ:

Կրթական և դաստիրակչական. Ներառական կրթությունը լինելով զարգացած

պետությունների հիմնախնդիրներից մեկը, անհրաժեշտ և կարևոր է դառնում, ընդգծելով պետությունների սոցիալական և կրթական զարգացման աստիճանը: Համընդհանուր կրթությունը պետք է սկսել նախադպրոցական տարիքից: Նախակրթարանները, կրթական բոլոր օջախները պետք է զինվեն լավագույն մասնագետներով, դաստիրակելու առանձնահատուկ կարողություններով երեխաներին: Ինտեգրումը հասարակության վաղ տարիքից նրանց թույլ կտա լիարժեք զգալ և ձևավորել հասարակության մեջ որպես անհատներ: Պետք է կրթել և դաստիրակել այնպիսի սերունդ, որ պատրաստական է օգնել, աջակցել ընկերոջը, նպաստել նրա հաջողությունների ձեռքբերմանը, ուրախանալ միասին հաջողություններով և հաղթահարել բարդությունները: Այսօր ուսուցչի ուսերին շատ մեծ պատասխանատվություն է դրված, որը նա միայնակ չի կարող կրել, քանի որ մինչև դպրոց մտնելը արդեն երեխայի ապագա՝ ապագա հասարակական անձի, գիտակցումը պետք է լայնախոհ լինի: Նա պետք է առաջնորդվի հետևյալ սկզբունքով. <<Բոլորս հավասար ենք, պետության կողմից սահմանվածկրթական օրենքը բոլորիս համար նույնն է՝ առանց խտրականության>>: Այս ամենքին ի հավելում հարկ է նշել ցանկացած պետություն, եթե իր առջև նպատակ է դրել համընդհանուր ներառական կրթությունը իր կրթական օջախներում հասցնել բարձրագույն մակարդակի և տալ լավագույն արդյունքներ պետք է անվերապահորեն ներդրումներ կատարի այս ուղղությամբ՝ օգտագործելով իր ողջ լծակները: Այս ոլորտի խնդիրները ընդամենը թվում են անլուծելի, անհրաժեշտ միջոցներ նվիրելու և ֆինանսական ներդրումների նպատակաուղղված աշխատանքի արդյունքում հնարավոր է արձանագրել մեծ հաջողություններ:

Մենք բոլորս պետք է սովորենք և հասկանանք, որ հանդուրժողականությունը այն համընդհանուր արժեքներից մեկն է, որը մենք բոլորս պետք է կիրառենք մեր առօրյա կյանքում: Սա բարոյական կանոն է, որը կապված է հարգանքի և պացիֆիզմի հետ:

Գրականության ցանկ

1. Ներառական կրթության ռազմավարություններ/ 2019, Ներառական կրթության ռազմավարություն:Դասագիրք: Մինեապոլիս, Մինեսոթա, ԱՄՆ. Մինեսոթայի համալսարան: ՅՈՒՆԻՍԵՖ
2. Ներառական կրթությունը գործնականում: Ուսումնամեթոդաբանական ձեռնարկ, Ս. Պետրոսյան. Երև. Աստղիկ 2018թ, 100 էջ
3. https://escs.am/am/static/inclusiveeducation?s=edu
4. https://parents.disabilityinfo.am/inclusive-education/
5. https://hy.warbletoncouncil.org/educacion-inclusiva-4732
6. http://lib.armedu.am/
7. https://www.unicef.org/armenia/media/3501/file/%D5%86%D5%A5%D6%80%D5%A1%D5%BC%D5%A1%D5%AF%D5%A1%D5%B6%20%D5%AF%D6%80%D5%A9%D5%B8%D6%82%D5%A9%D5%B5%D5%A1%D5%B6%20%D5%BC%D5%A1%D5%A6%D5%B4%D5%A1%D5%BE%D5%A1%D6%80%D5%B8%D6%82%D5%A9%D5%B5%D5%B8%D6%82%D5%B6%D5%B6%D5%A5%D6%80.pdf